«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ ՝ ՈՒսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցում

ԱՌԱՐԿԱ ՝ Ֆիզիկա

ՀԵՂԻՆԱԿ՝ Սևակ Բաղդասարյան

ՄԱՐԶ ՝ Արագածոտն

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Բերքառատի միջնակարգ դպրոց

ՈՒսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցում

Մարդկության պատմությունը դեռ շատ անակնկալներ կմատուցի ոչ միայն մեզ, այլև գալիք բազում սերունդների: Այս չարչրկված թեման ապագայում գուցե լիովին բացահայտվի, սակայն իմ կարծիքով միշտ էլ գաղտնիքներ, խութեր կմնան:

Ինքս փորձում եմ հեռու մնալ հարցի մեջ խորանալուց՝ համարելով դա մտքի անպտուղ աշխատանք, ավելի ճիշտ՝ չեմ տեսնում իմ դերը այդ բնագավառում: Իսկ աշխատանքս այսպես սկսելու պատճառը այն խոր համոզմունքս է, որ առաջնորդ, ռահվիրա, ուսուցիչ և նմանաբովանդակ կոչումները միշտ ուղեկցել ու շարունակելու են ուղեկցել մարդկությանը:

Երկար տարիների աշխատանքային փորձ չունեմ, սակայն հասցրել եմ համոզվել, որ ուսուցիչ լինելը ոչ թե մասնագիտություն է, այլ կոչում: Կամաց-կամաց խորանում եմ գայթակղիչ այդ լաբիրինթոսումու ինձ համար պարզում նոր աշխարհներ, գտնում երբեք բարձրաձայն չհնչվող հարցերի պատասխաններ՝ շարունակելով բախվել նոր հարցերի, անցանկալի փաստերի:

Երեխաները մարդկության գարնան առավոտն են, նրա հույսը, նրա ապագան: Նա, ով երեխա կրթելու ու դաստիարակելու մասնագիտություն է ձեռք բերել, չպետք է մոռանա, որ իր առաջնահերթ խնդիրն է թափանցել յուրաքնչյուր երեխայի հոգեբանության մեջ, ժամանակին կանխել վատ հակումների դրսևորումը, ճիշտ ուղղություն տալ նրա հետաքրքրությունների ու պահանջմունքների բավարարմանը: Չ՞ է որ ուսուցիչն, ի վերջո, <<մարդու>> մասնագետ է: Տեղին է հիշել Վ. Սուխոմիլինսկու դասխոսի մտերմիկ խորհուրդը իր սանին. << Վաղը կգնաս դպրոց, կդառնաս ինքնուրույն ուսուցիչ, և աստված քեզ փրկե վերացական ճշմարտություններ գործադրելուց՝ գրի առնված իմ խոսքերից: Եթե դու չես ճանաչի երեխաներին, եթե ճանապարհ չես գտնի դեպի նրանց հոգին, սիրտը, եթե նրանց չես տա քո սիրտը, հաջողության երբեք չես հասնի >>:

Ուսուցիչը ինչպիսի հատկություններ էլ որ ունենա, երեխաների կրթության և դաստիարակության մեջ միայնակ չի կարող հաջողության հասնել, եթե չունենա հասարակության, պետության, գործընկերների, երեխաների ընտանիքների աջակցությունը: Ընտանիքը և հասարակությունը պետք է համատեղ գուրգուրեն և պահեն մարդու ամենաթանկագին և ամենազարմանալի ստեղծագործությունը՝ երեխաներին:

Ընտանիքը հարյուրավոր անտես թելերով է կապված շրջապատող աշխարհի, հասարակության, հայրենիքի հետ: Այն նրա սկզբնական մասնիկն է, հիմքը, միսն ու արյունը, նրա մեծագույն հարստությունը:

Յուրաքանչյուր ծնող անկեղծորեն երազում է իր երեխային լավ ու երջանիկ մարդ տեսնել: Նույնն է նաև ուսուցչի ցանկությունը: Դրան կարելի է հասնել, եթե ծնողների, ընտանիքի դաստիարակչական ջանքերը լինեն ոչ միայն նպատակասլաց ու ամենօրյա, այլև գիտականորեն հիմնավորված, եթե դրանք համընկնեն հասարակական դաստիարակության համակարգի աշխատանքների ջանքերին: ՈՒստի երեխաների կրթութան ու դաստիարակության հաջողության համար կարևոր նշանակություն ունեն ծնողների մշտական կապը դպրոցի, ուսուցչի հետ, նրանց համաձայնեցված գործողությունները և բարենպաստ համագործակցությունը:

Յուրաքանչյուր ուսուցիչ պետք է ծանոթանա երեխաների ընտանքիների հետ, գիտենա, թե ինչ պայմաններում են ապրում երեխաները, ինչպիսի փոխհարաբերություններ գոյություն ունեն նրանց ընտանիքներում, ինչպես է իրականացվում նրանց ընտանեկան դաստիարակությունը: Անհրաժեշտության դեպքում միջոցներ ձեռնարկել կարիքավոր ընտանիքներին նյութական օգնություն ցույց տալու համար, աջակցել անբարեհաջող ընտանիքներում տիրող իրադրության նորմալացմանը:

Երեխաների կրթության ու դաստիարակման գործում դպրոցը, ուսուցիչն ու ծնողը հուսալի դաշնակիցներ պիտի լինեն: Ընտանիքի և դպրոցի պահանջների և գործողությունների համաձայնեցվածություն ու միասնություն, նրանց փոխօգնություն ու մշտական գործարար կապ՝ ահա աճող սերնդի հաջող դաստիարակության և ուսուցման գրավականը: Կարևոր է ընդգծել, որ ընտանիքի

և դպրոցի համագործակցության գործունեությունը կախված է երկու կողմերից, նրանց երկուստեք ակտիվությունից ու նախաձեռնությունից: Թե մանկավարժները, թե ծնողները, սովորողների անհատականության ձևավորման, նրանց բազմակողմանի զարգացման, ուսումնադաստիարակչական գործընթացի կատարելագործման նպատակով պետքէ որոնեն և գտնեն համատեղ գործունեության ընդունելի ուղիներ: Իրենց երեխաների արդյունավետ կրթության ու դաստիարակության անմիջականորեն շահագրգռված կողմը լինելով, ծնողները կարող են և պարտավոր են խորանալ դպրոցի, առանձին մանկավարժների աշխատանքի բովանդակության և կազմակերպման մեջ, մասնակցել դպրոցական կյանքի հրատապ հարցերի լուծմանը:Միայն այդ դեպքում կարելի է հուսալ դպրոցի և ընտանիքի արգասավոր համագործակցության, դպրոցականների ուսուցման ու դաստիարակության բարձր որակի մասին:

Աճող սերնդի դաստիարակության ուղղությամբ մանկավարժների և ծնողների ջանքերի միավորման գործում գլխավոր դերը, բնականորեն, պատկանում է դպրոցին, ուսուցչությանը: Դաստիարակության խնդիրների ուղիների պարզ պատկերացումը, երեխաների հանդեպ ունեցած սերը, իրենց փորձից ամեն լավագույնը նրանց տալու ձգտումն են որոշում ծնողների վրա ուսուցիչների ազդեցությունը, նրանց մանկավարժացումը, դպրոցի գործերին ու հոգսերին հաղորդակից դարձնելը:

Երեխաների վրա հիմնավորված և արդյունավետ ներգործելու համար նպատակահարմար է, որ ծնողները պատկերացում ունենան, թե ում հետ և ինպես են շփվում նրանք, ծանոթանան իրենց տղայի կամ աղջկա ընկերների հետ: Գյուղերում այդ խնդիրը մասնակիորեն լուծված է, քանի որ բոլորը իրար հետ շփվում են, ճանաչում են իրար ու երեխաներին (գյուղնն էլ յուրատեսակ մեծ ընտանիք է հիշեցնում: Իսկ մեծ բնակավայրերում ապրողները կարծես օտարներ լինեն, ուրիշ աշխարհից եկած՝ անտարբեր ու անհաղորդ):

Դաստիարակելու համար պետք է ճանաչել, իսկ ճանաչելու համար պետք է քաջատեղյակ լինել անձի հոգեբանության վերաբերյալ հոգեբանական գիտության ձեռք բերված ամենաթարմ (ոչ միայն) հետազոտությունների արդյունքներին և

ամբողջ սրտով սիրել, հարգել կարողանալ: Հարգել ուսուցչին, ով երեխային կառաջնորդի գիտելիքների զարմանահրաշ ու գեղեցիկ աշխարհը, կօգնի նրան դառնալու ավելի խելոք, ավելի լավ, ավելի ուժեղ:

Ընտանիքի և դպրոցի գործարար համագործակցության իրականացման մեջ մեծ ու պատասխանատու դեր են կատարում ծնողական կոմիտեները: Ստեղծվելով բոլոր դպրոցներում ու դասարաններում, նրանք հանդես են գալիս որպես ծնողների և ուսուցիչների միջև կապի հուսալի օղակ, կոորդինացնում են նրանց համատեղ գործունեությունը սովորողների բազմակողմանի դաստիարակության գործում:

Կար ժամանակ, երբ շատ ծնողական կոմիտեներ իրենց հիմնական խնդիրը տեսնում էին ամենից առաջ դպրոցին ցույց տրվող տնտեսական օգնության՝ նորոգումների անցկացման, ուսումնական և մյուս սարքավորումներով, տրանսպորտով ապահովելու, տարածքի բարեկարգման և նման այլ աշխատանքների մեջ: Իհարկե, այժմ նույնպես այդ խնդիրները օրակարգից դուրս չեն հանվում: Բայց կյանքի նոր ռիթմը ինքն է ճշգրտում մտցնում ծնողական ակտիվի գործունեության մեջ, ավելի ու ավելի մեծ ուշադրություն, ժամանակ և ուժեր են նվիրվում բուն դաստիարակչական աշխատանքին, որը կոչված է նպաստել բազմակիորեն զարգացած, ակտիվ և ստեղծագործ անհատի ձևավորմանը: Անհատի ձևավորումը սկսվում է ընտանիքում: Դրա հիմքը դնում են ծնողները և առաջին հերթին՝ մայրը: Իսկ երեխայի անձի ձևավորման արդյունավետությունը կախված է գործունեության տարբեր տեսակներին, խաղերին, աշխատանքին, ուսմանը, հաղորդակցմանը նրա ակտիվ մասնակցությունից: Նշանակում է՝ անհրաժեշտ է ճիշտ կազմակերպել այդ գործունեությունը, դրան տալ օգտակար ուղղվածություն, հարստացնել բովանդակությունը, այն դարձնել հետաքրքիր, ստեղծագործական:

Համաժողովրդական հոգատարություն է ընդհանուր պարտադիր միջնակարգ կրթության զարգացումը: Ճիշտ է, հիմնական կրթություն ստանալուց հետո, այսինքն՝ իններորդ դասարանն ավարտելուց հետո, աշակերտները կարող են շարունակել սովորել ավագ դպրոցի տարբեր հոսքերում կամ էլ ընդունվել քոլեջներ, պրոֆտեխուսումնարաններ, ձեռք բերել որևէ մասնագիտություն՝

միաժամանակ ստանալով միջնակարգ կրթություն: Այստեղ ևս մեծ է ծնողական կոմիտեների դերը: Այս երեխաները ևս դուրս չեն մնում դպրոցի ու ծնողական կոմիտեի տեսադաշտից:

Ծնողական ակտիվի գործունեության մեջ հատուկ տեղ է գրավում <<պրոֆիլակտիկ>> աշխատանքը: Այստեղ նկատի է առնվում <<դժվար>> երեխաների ու դեռահասների, անբարեհաջող ընտանիքների անհատական շեֆությունը, երկարօրյա խմբերի ստեղծումը, նրանց նկատմամբ ամենօրյա հոգատարությունը և այլն: Սրտառուչ զրույցը, համոզիչ կրքոտ խոսքը, ուսանելի վառ օրինակները, որոնք զուգակցվում են անհրաժեշտ օգնության և պատշաճ վերահսկողության հետ, որպես կանոն, ապահովում են ազդեցությունը թե երեխաների, թե չափահասների վրա: Ընդ որում ընտանիքի դաստիարակչական ներգործությանը ենթակա են ոչ միայն երեխաները, այլև չափահասները: Անհրաժեշտ է նշել դրա անընդհատությունը, տևականությունը, բազմակողմանիությունը: Մարդն իր ծննդյան օրից մինչև իր կյանքի վերջը կապված է ընտանիքին ենթարկվում է նրա ներգործությանը (տարբեր ձևերով և ինտենսիվությամբ): Երեխաների վրա ընտանիքի ազդեցության անփոխարինելիությունն էլ հենց բնորոշում է ընտանեկան դաստիարակության յուրատեսակ պրոցեսը: Ծնողների խելացի և նպատակաուղղված մանկավարժական աշխատանքը զուգորդվում է երեխաների վրա ընտանիքի ամենօրյա ապրելակերպի շատ ուժեղ ազդեցության հետ:

Մեծ է հոր և մոր անձնական օրինակի և հեղինակության, ազգակցական, զգացմունքների՝ դաստիարակողների ու դաստիարակվողների մտերմական, հուզական փոխհարաբերությունների դերը, որին չի կարելի հասնել ընտանիքից դուրս: Մարդկային կյանքի պայմաններն այնպիսին են, որ միշտ չէ, որ նույնիսկ ծնողը կարող է տեսնել և գիտակցել երեխայի վրա իր ունեցած ներգործությունը: Դրա դժվարությունը այն բանում է, որ երեխան միաժամանակ իր վրա է կրում բազմապիսի շատ ազդեցություններ: Ինչպե՞ս է նա դրանք ընկալում, ինչպե՞ս են դրանք ազդում նրա զարգացման վրա: Այդ ամենն իմանալը չափազանց դժվար է: Այստեղ հմուտ ուսուցիչը կարող է շատ բան կռահել ու աջակցել ծնողին,

ծնողական կոմիտեին, որի աշխատանքներին իբրև դիտորդ չի մասնակցում, այլ իբրև համակարգող, խորհրդատու, հուշարար, ակտիվիստ և այլն:

Ծնողների վրա մեծ պատասխանատվություն է դրված՝ երեխաների դաստիարակությունն իրականացնել գիտակցված՝ մանկավարժությունից, հոգեբանությունից, ֆիզկուլտուրայից ու հիգիենայից ունեցած գիտելիքների հիման վրա: Ընդ որում, անհրաժեշտ է խորապես իմանալ դաստիարակության նպատակը, խնդիրները, սկզբունքները, բովանդակությունը, միջոցները, ձևերը և մեթոդները:

Կան ծնողներ, որոնք հաճույքով մտնում են դպրոցական կյանք, նրա սաներին են նվիրում իրենց ազատ ժամանակը, նրանց հետ կիսում իրենց հոգեկան հարստությունը, վարպետությունը, իսկ հաճախ էլ կենսափորձը: Նրանք հասկանում են, որ դպրոցի նկատմամբ անկեղծ շահագրգռվածությունը, ուժերի ներածին չափ մասնակցությունը նրա հոգսերին ու գործերին, վերջապես՝ երեխաների հետ հաղորդակից լինելը ամրապնդում է հենց իրենց երեխաների հետաքրքրությունն ու սերը դեպի դպրոցը, իսկ դա, իր հերթին, բարերար ներգործություն է ունենում նրանց և՛ կարգապահության, և՛առաջադիմության, և՛ընդհանուր զարգացման վրա: Դրա հետևանքով երեխայի աչքում բարձրանում է հոր կամ մոր հեղինակությունը, բարելավվում են նրանց փոխհարաբերությունները:

Շատ ծնողների <<դպրոցական շարքում>> իրենց տեղը գտնելուն օգնում են հենց ծնողական կոմիտեները: Ծնողները դառնում են տարբեր խմբակների, սպորտային սեկցիաների ղեկավարներ: Նրանք օգնություն են ցույց տալիս ուսուցիչներին ետ մնացողների հետ տարվող աշխատանքում, դպրոցականների կողմից օրվա ռեժիմի կատարման ստուգման, նրանց կողմից օրագրերի ու տետրերի վարման, դասագրքերի պահպանման և այլ գործերում:

Ինքս գիտեմ օրինակներ, երբ ծնողների նախաձեռնությամբ (իհարկե, նաև դպրոցի մանկավարժական խորհրդի աջակցությամբ) դպրոցի աշակերտները զբաղվում են արհեստագործությամբ, մեղվապահությամբ, այգեգործությամբ: Առանց խաթարելու ուսուցման գործընթացը, դպրոցի բոլոր աշակերտներն ու ուսուցիչները մասնակցում են այդ աշխատանքներին: Ստացված եկամուտը

ծնողկոմիտեի և դպրոցի ղեկավարության համատեղ համաձայնությամբ ուղղվում է անվճար դասագրքերի, սննդի, հագուստի, էքսկուրսիաների, միջոցառումների կազմակերպմանը: Երեխաները, իրենց տարիքին համապատասխան, սիրով աշխատում են՝ այդ ընթացքում ավելի մտերմանալով, աշխատասեր դառնալով: Նրանք հաճույքով վայելում են իրենց աշխատանքի պտուղները՝ միաժամանակ ձեռք բերելով նոր հմտություններ: Ավելին, այդ աշխատանքները զուգորդվում են արվեստի հետ. Երգում են ժողովրդական աշխատանքային երգեր, կատարում տվյալ աշխատանքին վերաբերող պարեր, նկարում իրենց տեսածն ու զգացածը: Արդեն ծնվում է հարգանք աշխատանքի ու աշխատողի նկատմամբ, ժողովրդի նկատմամբ:

Ծնողական կոմիտեի նախաձեռնությամբ հայրերը և մայրերը մասնակցում են դպրոցական տոների, էքսկուրսիաների և արշավների նախապատրաստմանը և անցկացմանը, կազմակերպում կինոնկարների, ներկայացումների դիտում, թանգարաններ այցեր, մրցաշարեր, հանդիպումներ հետաքրքիր մարդկանց հետ, տարբեր թեմաներով իրենք են զրույցներ անցկացնում: Անցկացնում են ընտանեկան դաստիարակության փորձի փոխանակման կոնֆերանսներ, տարածում մանկական գրականություն, լույս ընծայում հատուկ պատի թերթեր ծնողների համար:

Կոնֆերանսներին կարելի է քննարկել ընտանեկան դաստիարակության ընդհանուր հարցեր, օրինակ՝ <<Ընտանիքում երեխաների դաստիարակության փորձից>>: Այս դեպքում յուրաքանչյուր ելույթ ունեցող կարող է պատմել, թե ինչպես է կարողանում հաջողության հասնել, ինչպես է հաղթահարում դժվարություններն ու անհաջողությունները, ինչ դասեր կարող են քաղել բոլոր ծնողները իր փորձից: Բայց կարող է առաջ քաշվել և դաստիարակչական աշխատանքի մի հարց՝ բազմակողմանի քննարկման համար, օրինակ՝ <<Վարքի կուլտուրայի դաստիարակությունը>>, <<Ինչպես ղեկավարել արտադասարանական ընթերցանությունը>> և այլն: Եվ առաջին, և երկրորդ տարբերակների նպատակահարմարությունը հաստատվում է գործնականում: Առաջին դեպքում բացահայտվում է շատ ընտանիքներում կիրառվող դաստիարակչական տարբեր կողմերի առաջավոր փորձը: Ելույթ ունեցող

ծնողները երևան են հանում երեխաների վրա ներգործելու ուղիների բազմազանությունը: Այստեղ կարելի է հասնել կարծիքների լայն փոխանակության մի ամբողջ շարք հարցերի շուրջը: Չ՞է որ, գրեթե յուրաքանչյուր ընտանիքում առկա է այն արժեքավորն ու կարևորը, որ կարող է դառնալ բոլորի սեփականությունը: Դա բոլոր ընտանիքներին մոտեցնում է դպրոցին: Բոլորի համար ուսաելի են նաև ծնողների անկեղծ պատմածները դաստիարակության մեջ իրենց կրած անհաջողությունների, խափանումների ու դառնությունների մասին: Երկրորդ տարբերակը արժեքավոր է նրանով, որ նրա քննարկումը կարող է ավելի խոր ու սպառիչ լինել:

Բայց ցանկացած տարբերակի դեպքում կոնֆերանսը պատրաստվում է նախօրոք և հիմնավորապես: Հարկավոր է վերցնել այն թեման, որը հետաքրքրում է բոլորին կամ ծնողների մեծ մասին: Հարկավոր է նախօրոք բոլոր ծնողներին հայտնել թեման, որպեսզի նրանք կարողանան դրա շուրջ մտածել և նախապատրաստվել կոնֆերանսին: Լավ կազմակերպված կոնֆերանսը կարող է դառնալ մի էտապ ծնողների հասարակական կարծիքի ձևավորման, ընտանիքի և դպրոցի համագործակցության ամրապնդման մեջ: Տարբեր տիպի դպրոցներ ունեն իրենց առանձնահատկությունները նաև ընտանիքի հետ տարվող աշխատանքում:

Դպրոցներում լայնորեն կիրառվում են իրենց երեխաներին հաջողությամբ դաստիարակող ծնողներին խրախուսելու տարբեր միջոցներ: Որպես նման միջոցառումներ կիրառվում են գովասանքը ծնողական ժողովում, ընտանիքում դաստիարակության դրական փորձի մասին պատմելը, գրավոր շնորհակալությունը, դպրոցի շնորհակալական նամակը ծնողների աշխատանքի վայրի ղեկավարությանը և այլն:

Մանկավարժական գործունեության պրոցեսում, ի տարբերություն գործունեության այլ տեսակների, դժվար է ճշգրիտ հաշվի առնել աշխատանքի որակը, որոշել հետագայում կատարվելիք հնարավոր արդյունքները: Շատ բան կախված է ուսուցչի անհատական առանձնահատկություններից, վարքի կուլտուրայից, բնավորությունից, խառնվածքից, անմշակ հոգիները ձևավորելու նրա վարպետությունից: Եվ ոչ միայն ուսուցչի, այլև ծնողի, երեխայի, ընտանիքի

առանձնահատկություններից: Այն ծնողներն ու մանկավարժները, որոնք հրամայելու փոխարեն կարողանում են համոզել, սպառնալու փոխարեն՝ մտերմանալու հատկապես արբունքի հասած պատանիների ու աղջիկների հետ, նրանք, ովքեր դառնում են դեռահասների վստահելի ընկերները՝ մշտապես դրական արդյունքի կհասնեն:

Եթե ուզում եք դեռահասը ձեզ դիմի օգնության համար, ձեզ մոտ բաց անի իր սիրտը, պահպանեցեք նրա հոգու հատկապես այն անկյունները, որոնց դիպչելն ընկալվում է ցավագին: Դրանց պատճառները բազմազան են: Շատ հաճախ երեխաների կրթության ու դաստիարակության մեջ վրիպումների ու սխալների պատճառ են դառնում երեխաների նկատմամբ կույր, ոչ խելացի սերը, ծնողի պահանջկոտության բացակայությունը, ընտանիքի նյութական լավ պայմաններից նրանց շփանալը: Կամ մեկ ուրիշ պատճառ. Ծնողների ուշադրությունը կենտրոնանում է ընտանիքի նյութական- կենցաղային պայմանների բարելավման վրա, իսկ կրթությունը ու դաստիարակությունը երկրորդական պլան են մղվում, քիչ ուշադրություն դարձվում: Հանդիպող դեպքեր են, երբ ֆիզիկապես թույլ կամ հիվանդություն ունեցող երեխայի հետ չափազանցված մեղմ, զիջող վերաբերմունք են դրսևորում, նրան ավելի չվնասելու հասկանալի բարի դիտավորությամբ, որը հետագայում բումերանգի պես վերադառնում է ծնողին՝ նրան կանգնեցնելով փաստի առաջ.երեխան դարձել է ծույլ, իր ասածի, եսասեր և ինքնահավան: Երեխաների վրա անասելի խոր ու ցավոտ հետքեր են թողնում նաև ծնողների հաճախակի վեճերն ու իրար մեղադրելը: Դրանից տուժում է նրանց կրթության ու դաստիարակության գործը, թեև երբեմն (շատ քիչ) դեպքեր են լինում, որ հաստատակամ ու խելացի երեխան, դասեր քաղելով այդ անցանկալի վիճակից, հետագայում ստեղծում է համերաշխ, ներդաշնակ ու գեղեցիկ իր ընտանիքը:

Վնասակար է նաև չափից ավելի խստությունը. Երեխան մեկուսանում է, դառնում ինքնամփոփ, չի վայելում ուրախ ու հետաքրքիր իր տարիքի կյանքի իրավունքը:

Եվ անձի հոգեբանության մեջ ի հայտ են գալու շատ շեղումներ ապագայում, որոնց ուղղումը դառնում է չափազանց դժվար կամ անհնար, մինչդեռ ժամանակին գիտակցված մոտեցումը կբացառեր նման սխալների ծնունդը:

Հաճախ հանդիպող իրավիճակ է, երբ ուսուցչից դժգոհ (տեղին կամ անտեղի) երեխան գանգատվում է ծնողներին: Վերջիններս, առանց խորանալու պատճառների մեջ, երեխայի ներկայությամբ քննադատում են ուսուցչին, մեղադրում իրենց <<հրաշքին>> նեղացնելու համար: Երեխայի մոտ ուսուցչի նկատմամբ հարգանքը կորավ, ավելին՝ ծնվեց վստահություն իր նորանոր սխալները ուսուցչի վրա բարդելու գայթակղիչ հեռանկար:

Նման շատ թերություններ, սխալներ կան՝ երեխաների միջև ծնողների կողմից խտրականություն դնելը (սիրելիի և անհաջողի), երեխաների դաստիարակության գործում ընտանիքում միասնական պահանջների և հստակ գծի բացակայությունը, ծնողների սխալ վարքագիծը կենցաղում, երեխաների անհիմն իդեալականացումը, երեխաների նկատմամբ անտարբերությունը և այլն: Այս վատ հետևանքներ թողնող սխալներից ինձ հատկապես անհանգստացնում է երեխայի ծնողի, ինչո՞ւ ոչ, նաև ծնողների հարբեցողությունը: Չունենալով կամքի ուժ՝ խելամտություն մերօրյա բարդ ու հակասական աշխարհում կայուն տեղ ունենալու համար, հաճախ լուծումը գտնում են հարբեցողության, թմրամոլության մեջ՝ արդարացնելով իրենց այլ ելք չգտնելու համար: Ընտանեկան մթնոլորտը աղավաղվում է դրանից, դառնանում է երեխայի մանկությունը, խաթարվում բարու և չարի մասին նրա պատկերացումները, արգելակվում նրա բնականոն զարգացումը, դարձնում նրան անգործունյա, մելամաղձոտ ու միայնակ: ՈՒ ծնողը զարմանում է այդ փոփոխությամբ:

Այլ է հարցը դեռահասների հարցում: Նրանց մեջ փոփոխություններ ծնողների համար հաճախ տեղի են ունենում չափազանց արագորեն: Երեխան աճել է, փոխվել, իսկ սիրող ծնողները շարունակում են նրան պատկերացնել այնպիսին, ինչպիսին նա եղել է մի քանի տարի առաջ, ընդ որում, իրենց կարծիքը նրանց թվում է անսխալ:

<<Ծնողների գլխավոր դժբախտությունն այն է, որ նրանք մեզ ճանաչել են փոքր տարիքում>>,- ասել է տասնհինգամյա մի պատանի: Իր նկատմամբ

ծնողների վերաբերմունքը պատանին կատարելապես ուսումնասիրելու ժամանակ ունեցել է: Իսկ ծնողին հարկ է լինում գնահատելու վերջերս ձևավորվող, փոփոխվող և հակասական պատանեկան **Ես**-ը: Մտերմական ու անկեղծ խոսակցությունը լավ է և անհրաժեշտ միայն այն դեպքում, երբ այն մտերմիկ ու անկեղծ է երկու կողմից: Բայց դժբախտություն է, երբ չափահասը սկսում է կեցվածք ընդունել: Իհարկե, պատանեկան բոլոր պրոբլեմներն ու ապրումները չէ, որ պետք է պարտադիր կերպով արտահայտվեն բարձրաձայն և դառնան քննարկման առարկա:

ՈՒրիշի ներաշխարհի մեր մեկնաբանությունը, որը բացարձակ անվիճելի է թվում մեզ, կարող է սխալ լինել: Բացի դրանից, և դա գլխավորն է, անձնավորության նկատմամբ պահանջվող հարգանքը, առանց որի չի կարող լինել դաստիարակություն, բովանդակում է մտերմություն, գաղտնիքի, ինչ-որ միայն իրեն վերաբերյալի իրավունքի ճանաչում:

Նշենք՝ որքան երեխաներն ավելի են մեծանում, այնքան նրանց մեջ մեծանում է սեփական, մեծերից անկախ, ռեալությունը և այնքան ավելի մեծ չափով դաստիարակությունը դառնում է ինքնադաստիարակություն: Իսկ ինքնադաստիարակությունը մարդկային արժանապատվությունն է գործողության մեջ:

Ցածր ինքնահարգանք ունեցող պատանու ինքնազգացողությունը բարելավելու լավագույն միջոցը ոչ թե նրա հետ այդ թեմայի շուրջը վիճաբանություն սկսելն է, այլ աննկատելիորեն նրա համար այնպիսի իրավիճակ ստեղծելն է, որի մեջ նա կարողանար բնականորեն հանդես բերել իր ուժեղ հատկությունները և գտնել շրջապատողների ճանաչումը:

Հմուտ ուսուցիչը վերը թվարկված շատ հարցերից բացի պիտի աչքաթող չանի դասարանական կոլեկտիվի դերը: Իմ կարծիքով սա էլ մի յուրատեսակ ընտանիք է՝ իր գրված ու չգրված օրենքներով: Նրանք ունեն միասնական նպատակներ, որոնց հասնելու համար տվյալ խմբի անդամները կազմակերպում են համատեղ գործունեություն և մտնում են փոխադարձ կախվածության ու պատասխանատվության որոշակի հարաբերությունների մեջ՝ կոլեկտիվի առաջ բոլոր անդամների իրավունքների և պարտականությունների անվերապահ

հավասարության պայմաններում: Կոլեկտիվի կարծիքը երեխայի համար երբեմն ամենակարևորն է: Թեև ոչ բոլոր աշակերտներն են արագ և գործուն կերպով ներգրավվում կոլեկտիվ կյանքի մեջ: Որոշ երեխաներ իրենց պասիվ են պահում հասակակիցների շրջանում, չեն մասնակցում հանրօգուտ գործերին, հաճախ էլ իրենց հակադրում են կոլեկտիվին: Այս հարցն էլ անլուծելի չէ, քանի որ միշտ արդիական է մնում նաև անհատական մոտեցման անհրաժեշտությունը: Ամեն ինչ կյանքում, և առաջին հերթին գիտելիքը, ինքն իրեն չի տրվում մարդուն: <<գտնում>> է նա, ով ճիգ ու ջանք չի խնայում դրա համար:

Ամեն մի աշխատանքում, իսկ ուսուցչի աշխատանքում առանձնապես, հաջողությունը կախված է մարդու նպատակամղումից և գործին նվիրված լինելուց:

Վերջաբանի փոխարեն

Թեման շատ ընդգրկուն է, կարելի է անվերջ գրել ու էլի չհասնել հատակին:

Իսկական ուսուցիչը անդադար սովորում ու սովորեցնում է, մշտապես անցնում մտավոր ու բարոյական ինքնակատարելագործման բովով: Սա այսօրվա և, մանավանդ, վաղվա դպրոցի հեռանկարի պահանջն է:

Եվ որքան մեծ լինի հոգեկան դրական հատկություններով օժտված, դպրոցի շեմին հաճելի երկյուղածությամբ ոտք դնող ուսուցիչների թիվը, այնքան կշահի ողջ հասարակությունը, նույնքան գեղեցիկ ու հմայիչ կդառնա մարդկային կյանքը:

Մեր առջևում մի ամբողջ կյանք կա: Թող բոլորիս ուղղվի ժողովրդական իմաստնությունը. <<Դար ապրիր, դար սովորիր, դար աշխատիր, դար սիրիր>>:

ՈՒսուցչի և ընտանիքի գործը սեր է: Իսկ իսկական սերը սրբազան պարտք է, պարտականություն ամբողջ կյանքում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Տ.Ս. Էլոյան <<ՈՒսուցիչը և նրա գործունեության հոգեբանական առանձնահատկությունները>>; Երևան 1980թ.
2. <<Դպրոցականներին ընտանեկան կյանքին նախապատրաստելու ուսումնամեթոդական մշակումներ >>; Երևան 1983թ.
3. Լ.Ա.Բոգդանովիչ, Վ.Մ. Լապիկ <<Դեռահասների սեռական դաստիարակությունը>>; Երևան 1977թ.
4. <<Ընտանեկան կյանքի բարոյագիտություն և հոգեբանություն >>; Երևան 1986թ.
5. Հ.Լ. Կանցյան <<Մեծերի համար փոքրերի մասին>>; Երևան 1976թ.
6. Ռ. Աթայան <<Աշակերտների գեղագիտական դաստիարակությունը>>; Երևան 1994թ.
7. Ի.Ս. Կոն <<Ինչպիսիք են նրանք իրենց պատկերացմամբ>>; Երևան 1978թ.: